

ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ¹

Զինաիդա Բալայան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրԴՀ

Բանալի բառեր. Արցախյան հանելուկներ, Արցախյան ավանդություններ, Ղարաբաղ, բարբար, բառարան, մտախառնվածք (մենթալիտետ), արցախահայ բանահյուսություն, տոհմիկ հոգեբանություն, պատմական հիշողություն, ասացող, վիպասաց, ավանդաշատ, հեքիաթասաց, հանելուկ, ավանդություն:

Արցախահայ բանահյուսությունը ամբողջության մեջ՝ չհայտնաբերվածությամբ, չմշակվածությամբ հանդերձ, հայ ժողովրդական ստեղծագործությունների ոսկե երակն է կազմում, միաժամանակ, առանձնանալով իր ինքնատիպ թե՛ ժամրային կառուցվածքով, թե՛ ապացույցների որակական պսակով, բարձր ու հետաքրքիր գաղափարայնությամբ, թե՛ աշխարհագրական լանդշաֆտի յուրատիպ գծույթներով, արցախահայ բարբարի տեղայնային տարբերակիչ օղակներով, թե՛ նյութերի, երևույթների, ազգային ավանդությունների, պատմական հիշողությունների, տոհմիկ հոգեբանության, արցախցու հետաքրքիր բառ ու բանի անգերազանց գեղարվեստական խտացումներով-ընդհանրացումներով:

Արցախական աշխարհը, որպես Ավետյաց երկիր, իր բարձրագահ ու թափանիստ սար ու ծորերով ոգեղեն արարումների մի բանադաշտ է՝ ինքնատիպ, ժայռեղեն կերտվածքով, լեզվաոճական հարուստ դրսնորումներով, անկրկնելի բարբառով՝ կապուտիկյանական ճշմարիտ բանացուցնամբ՝ «շուրբերիդ Վրա այնպես է բառը, ինչպես ժայռը հողում խրված»։ անբեկանելի՝ ճշմարտություն։

Տոհմիկ արցախցին և ստեղծաբան է, ասացող, և վիպասաց, ավանդութակիր, ավանդաշատ, և հեքիաթասաց-հեքիաթաստեղծ։ Մի խոսքով՝ նախնի ժամանակներից էլ նա հիշողութակիր-Վիպող-Վիրտուոզ (հանկարծաստեղծ) է։ («Աստված, թա կարում չըս մըէզ պահիս, վեր եք, մունք քեզ Ճըղուապուրու մաշու նման պահինք»), կամ («Հըյավուր ընք, սըվավուր ընք, թըվավուր ընք»), կամ («Հայ ընք, վայ ընք, ըստծու թայ ընք»), - փիլիստփայում է իմաստասեր արցախցին։

Հայ և արցախահայ բանահավաքչական աշխատանքները վավերագրել են իրենց հետաքրքիր դրսնորումները. իրատարակվել են տար-

¹Հորդածք ընդունված է 22.10.14:

բեր ժանրատեսակներով (հաճախ՝ միախառն) բովանդակային, մեկնողական, քրիստոնատիկ, բանաձևային ժողովածուներ:

Նմանատիպ շնորհակալ աշխատանքի է որդեգրվել նաև բ.գ.թ., դոցենտ Արմեն Յուրիի Սարգսյանը, որի ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակը իր մեջ ներառում է նաև արցախահայ բանահյուսական երկերի որոշ ժանրատեսակների (հանելուկ, ավանդություն, զվարձախոսություն, հեքիաթ և այլն) հավաքումը, քարտավորումը և հրատարակումը:

Արցախահայ բանահյուսական երկերի բանահավաքագրական ու հրատարակչական մասնակի աշխատանքներ են ամփոփված Սարգիս Զալայյանցի «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» ուսումնասիրության I (1842թ.) և II (1858թ.) մասերում, Մակար Բարխուդարյանի «Արցախ» (1885թ.), «Աղվանից աշխարհը և դրացիք» (1893թ.), Մ. Բարխուդարյանի գրաբարից աշխարհաբար թարգմանությամբ «Գաղտնիք Ղարաբաղի» (1886թ., Սանկտ Պետերբուրգ), Լեոյի «Ուխտավորի հիշատակարանը» (1885թ.), «Իմ հիշատակարանը» (1890թ.), «Մելիքի աղջիկը», Ռաֆֆու «Երկու ամիս Աղվանից աշխարհի շուրջ», «Խսամսայի մելիքությունները» (1895թ.), Ս. Լալայանի «Վարանդա» (Ազգագրական հանրես, Թ գիրք, 1897թ.), Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ» ուսումնասիրություններում, որոշները՝ ի ամփոփ Ա. Ղանալանյանի «Ավանդապատում»-ում:

Ա. Սարգսյանը ևս մատնանշում է այս աղբյուրները՝ իրենց տեսակի մեջ դրանք որպես գնահատված-արժենորված ժողովածուներ ներկայացնելով:

Արցախահայ բանահյուսական նշանարների ամբողջական հրատարակչական աշխատանքներից առանձնանշելի են Մ.Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» (1971թ.), Մ. Առաքելյանի և Ռ. Ղահրամանյանի «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողբանահյուսությունից» (1978թ.), Ս. Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, 1981թ.), Լ.Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» (1991թ.), Հր. Բեգլարյանի «Արցախ-Նամե», «Պըլը Պուղի» (Ստեփանակերտ, 2007թ.), Ա. Սարգսյանի 2014թ. հրատարակված «Արցախյան զվարձախոսություններ» և այլ ուսումնասիրություններ:

Ա. Սարգսյանի Ստեփանակերտի «Դիզակ պյուս»-ում, 2007թ. հրատարակված «Արցախյան ավանդություններ» ժողովածուն վերոհիշյալ շարքի արժեքավոր ննուշներից է:

Հեղինակի նախասիրած ժանրը այս անգամ (2002թ. բանագետը «Դիզակ պյուս» հրատարակչությունում լույս է ընծայել բանահյուսական՝ հանելուկի ժանրը Ներկայացնող «Արցախյան հանելուկներ» ժողովածուն) արցախահայ ավանդություններն են, ժանրատեսակ, որը ստեղծագործական բավականին լուրջ և հիմնավոր ձանապարհ է անցել, ունեցել է զարգացման պատմական և վիպական շերտեր, տեղագրական և ազգագրական, աշխարհագրական հետաքրքիր երանգներ, թեմատիկ տարբերակումներ, հայրենասիրական և լուսավորչական մեկնումներ, լեզվական յուրահատուկ տարանցումներ, բարբառային ինքնատիպ դրսնորումներ:

Արցախահայ բանահյուսական հնարնջուղ ու ճոխ ժանրանիի այդ պատումային զարմանահենք տեսակը՝ ավանդությունը, հնադեմ է, պատմական զարգացման տարբեր ժամանակների վիպական-դիցարանական երևույթների, ֆոլկլորային ակունքների, էթնիկ շերտերի կրողը:

Հարկավ. ինչպես մեծն Խսահակյանն է բնութագրում, ավանդությունները «երկիրը շենացնում են, բովանդակություն, խորություն, խորը տալիս, իմաստավորում, բանական դարձնում, բանաստեղծացնում, վիպային դարձնում, անհատականացնում, անձնավորում, հոգեշինացնում, մարդկայնացնում, ազգայնացնում, վրան կնիք ու դրոշմ դնում, կերպարանք տալիս, թե՛ ձև, թե՛ հոգի»¹, ազգային խառնվածքները թրծում՝ նրանց նկարագիրը տեսանելի դարձնելով:

Ավանդությունները կարելի է որպես հնագույն արցախահայ մարդու՝ պատմականորեն վավերացված վիպական, տոհմիկ նկարագիր, աշխարհաընկալումի պատումնաշար, ավանդույթների վիպասինթեզ, հերոսականության, մաքառումների, ազգային գենագծերի, ոգորումների, լինելության, լուսապաշտության, միֆական ասացումների, ավանդույթների գանձարան, իր արմատների ցուցանեկնարան գեղարվեստական նրբին ու ընդգրկված խտացումներով:

Անշուշտ, այս հատկանիշների գերակա ոճասինթեզը գերել է Ա. Սարգսյանին, որի արդյունքում նա ընթերցողների սեղանին է դրել «Արցախյան ավանդությունները»:

¹ Խսահակյան Ավ., Խտացումներ, «Գրական թերթ», 1960, թիվ 44:

Գիրքը հետաքրքիր, ուսանելի, արժեքավոր է մասնագիտական միքանի տեսանկյունից: Նախևառաջ առաջնանշենք. Ժողովածուն կազմված է հեղինակային ուղենչող խոսքից, ներածությունից, ժամրի մեջ երկնային մարմիններն ու երևոյթները ցուցող մասից, ընդգծված է ավանդութակիր Ղարաբաղ աշխարհը իր հինգ շրջաններով (Հաղորութ, Մարտունի, Մարտակերտ, Շահումյան, Շուշի) ու դրանց մեջ վերոհիշված այն գյուղերը, որոնց շուրջ ժողովուրդը հնուց հյուսել է պատումներ, և որոնք հաճախ մեկնում են նրանց ծնունդը, անվանադրությունը, հերոսականությունը, խառնվածքային գծերը: Այս տեսանկյունից հատկապես հատկանշական է Ղարաբաղին վերաբերող ավանդությունը.

«Ասում ըն՝ Լենկ-Թեմուրը վեր հըսալ ա Գօրիս, ուրան մարթկանցան մին քանէ հօրու դարկալ ա մէր յէրգիրը, թա.

-Քյըէցէք, տըէսէք էտ հուվէրք ըն, հինչ հըրըստօթուն օնին:

Տահանք էլ յըէկալ ըն, տը էսալ, քյըէցալ, լօխ նաղլ ըրալ.

-Յէրգիրը յավ յէրգիր ա՝ կանանց բըղէրում թաղված, ամմա ժուղօվուրթը շատ դօձաղ ըն, յավ կինի դըրաղ շող տաս:

Ես ըռնըխըմէն էլ ըսկացալ ա, ըսկացալ, թա.

-Յըէս հանց քըրըքանդ բիդի անին էտ կանանց բաղէրը, վեր տըէրնակարա (սկ) բաղէր:

Ըստրղան ա մէր յէրգիրին անումը մընացալ Ղարաբաղ»¹:

Ուսումնասիրող-բանահավաքը, նոյն հաջորդականությամբ նշելով շրջաններն ու նրանց մեջ ներառած տարածքները, առանձին մասով ներկայացնում է լեռները, բերդերը, ժայռերը, քարերը, ձորերը, դաշտերը, կամուրջները, տեղամասերը, ձանապարհները, դրանք իմաստաբանում ըստ ավանդության տրված անուններով ու հատկանշող բացահայտումներով:

Հաջորդ մասը ներկայացնում է կրոնական բնույթ կրող ավանդությունները, որոնք վերնագրված են «Վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, գերեզմաններ, սրբավայրեր» սկզբունքով: Այնուհետև հեղինակը առանձին բաժնով ներկայացնում է աղբյուրները, լճերը, գետերը՝ նոյն վարչատարածքային սահմաններով: Մաս են կազմում նաև բույսերի ու կենդանիների վերաբերյալ պատում-բացահայտումները: Առանձնաբաժնով են միաժամանակ Արցախա տան նշանավոր դեմքերը, տոհմերը, գերդաս-

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, Ստ., «Դիզակ պյուս» տպ., 2007, թիվ 10, էջ 17:

տանները: Նախավերջին բաժինը օղակում է այլ ժանրատեսակներ և՝ առաջ-ասացվածքներ, անեծքներ, դարձվածներ, մականուններ:

Գիրքն ունի նաև կարճամետրած՝ այլևայլ բաժին ներկայացնող մաս, որին հաջորդում են ծանոթագրությունները:

Կազմված բաժինները հեշտացնում, դյուրին են դարձնում նյութը թե՛ բովանդակային, թե՛ ձևային, թե՛ ավանդությունների աշխարհագրական-տարածքային-ստեղծաբանական, կրոնական ու աշխարհիկ առանձնացումներով, թե՛ բուսական ու կենդանական աշխարհներին վերաբերող կտրվածքների, թե՛ ազգային, տոհմաբանական ճյուղագրությունների, գերդաստանների խրոնիկան մեկնելու, արժեքավոր դիրքերում այն տեղադրելու տեսանկյուններից, որը բանագետը ըստ սկզբունքի է կատարել: Այն նաև ուսուցողական, մեթոդական տեսանկյունից շահեկան է:

Նախամուտքում («Հեղինակի կողմից» վերտառությամբ) Ա. Սարգսյանը մեկնում և արժևորում է որոշ բանագիտական կարևոր տեղեկություններ: Նրա ընդգծմամբ՝ «Արցախյան ավանդություններ» ժողովածուն պարունակում է 266 ավանդություն ու ավանդագրույց (Երկու ժանրատեսակների հիմքն էլ իրական և հավաստի պատմություններ, պատմականազգային դիմագիծը վեր հանող նկարագրություններ են՝ 55 տարբերակումներով):

Ըստ Ա. Սարգսյանի՝ նշված քանակից 244-ը գրավոր խոսքում ներկայացվում է առաջին անգամ, որն ավելի է բարձրացնում ժողովածուի տեսակարար կշիռը՝ հատկանշելով նրա աղբյուրագիտական որակը:

Ժողովրդական այդ հրաշակտորները բանասացներից 1992-2006թթ. լսել ու գրի է առել հեղինակը նրանց իսկ ծննդավայրում ու ապրած վայրերում:

Ավանդությունների մի այլ մասը՝ մեկնաբանի տեղեկատվությամբ, գտնվում է հայագետ-բարբառագետ, բառարանագիր, մեծ որբություն ճաշակած, նախսկին վանեցի Կարո Դավթյանի (1904-1965) անձնական, մի մասն էլ՝ ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվներում: Այդ կտորները գրի են առնվել ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողների կողմից¹:

Իր կողմից ասված նախախոսքում գիտնականը ընթերցողին ներկայացնում է ներածության ամփոփ նկարագիրը՝ մասնագիտական հմուտ

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 3:

մեկնություններով: Այստեղ արդեն գործ ունենք խելացի բանահավաք-լեզվաբանի, բարբառագետի, իր երկրի ֆոլկլորի բնույթին, ակունքներին, սեռերին, ժանրերին ու նրանց առանձնահատկություններին քաջատեղյակ քննաբանի հետ:

Հեղինակը վերոցուցված՝ ինը մասից բաղկացած ժողովածուի նյութում ներկայացված ավանդությունները ճշտամարս, հեշտամարս դարձնելու նպատակով համարակալել է համապատասխան վերնագրերով:

Ներկայացրած նյութի հաջորդականությունը տրված է աշխարհագրական վայրի ցուցմանը՝ հարավից հյուսիսի հաջորդականությամբ:

Բանահավաքը, միաժամանակ, հնուտ ուսումնասիրողի է նման. իր նյութը դասդասելուց հետո այն ստուգում է նույն վայրի մի քանի բարբառախոսների վկայությամբ՝ այսպիսով ապահովելով նյութի հավաստիությունը:

Ժողովածուի նյութը ոչ միայն Դարաբաղի բուն բարբառը, այլև Հադրութի, Շատախի, Շահումյանի, Մեհտիշենի Ենթարբառներն է ընդգրկում՝ 80 խոսվածքաշերտերով:

Բանահավաքական աշխատանքների տպագրությունը հուշում է, որ որոշ պաշտոնապես նշանակված խմբեր նույնիսկ չեն ցուցաբերել համապատասխան մասնագիտական մոտեցում: Հաճախ պարզապես նյութը բանասացներից գրանք են՝ առանց նշելու գրառման վայրը, ժամանակը, Ենթարբառի տեղը, բանասացի ինքնությունը և այլն և այլն:

Այս պարագայում՝ պարզապես հիանալ կարելի է Ա. Սարգսյանի շնորհակալ աշխատանքով: Նա պահպանել է (նույնիսկ գերակատարել) բանահավաքական աշխատանքներից պահանջվող մասնագիտական բոլոր նրբությունները:

Դրվատելի է նաև այն փաստը, որ բանահավաքը ընթերցողին (իսկ այն համոզված ենք, բազմատար է) օգնելու նպատակով, ժողովածուն ներկայացնում է Արցախի բարբառատարածքի խոսվածքային այն բնորոշ հնչյունները, որոնք չկան գրական հայերենում: Դրանք են.

ա - ա ձայնավորի քնային տարբերակը՝ արուն, ահատ, հար, հալա;

ու – ու ձայնավորի քնային տարբերակը՝ ուրուգ յուն, վուրք յ-տուրք յ, տուզնը, սուրու;

օ – օ ձայնավորի քնային տարբերակը՝ օօօ, շօր, ծօր, քյօրիսա;

ը է – ը և է ձայնավորների միջին աստիճանը՝ մըէծ, խըէլք, վըէտք, ծընըէրնը;

ը ի (գործածական է միայն որոշ՝ հատկապես Մարտակերտի շրջանի խոսվածքներում) – ը և ի ձայնավորների միջին աստիճանը՝ ըիվիլանալ, խըհլա, նըհստա, լըիվօթուն;

զյ - գ բաղաձայնի քնային տարբերակը՝ գյիղալ, զյօլ, դագյա, խօրագյ;

կ յ – կ բաղաձայնի քնային տարբերակը՝ կ յուտիլ, կ յուլ, կ յումաշ, կ յըրկ յամօտ;

ք յ – ք բաղաձայնի քնային տարբերակը՝ ք յօրիկա, ք յօթուկ, բալք յի, մարաք յ:

Որոշ խոսվածքներում հազվադեպ գործածություն ունեն դ յ, զ յ, թ յ, լ յ, ծ յ, ճ յ, ս յ, ց յ և այլ բաղաձայններ, որոնք ներկայացնում են գրական հայերենի համապատասխան հնչյունների քնային տարբերակները՝ քրդքանդ յ, մազ յ, խութ յ, լ յավ, կըծ յաքար, ճ յինանչիլ, քըս յիլ, քըց յիլ։ Տարածքի բոլոր խոսվածքներում բացակայում է ֆ հնչյունը, որի փոխարեն ամենուր գործածվում է փ բաղաձայնը¹:

Ներածությունում հեղինակը սեղմ բնութագրում է ավանդության ժանրը և մեկնում այն բնութագրող հատկանիշները, ցուցում՝ գտնելով, որ «հնում տեղի ունեցած պատմական դեպքերը, ներքին և արտաքին շփումներն ու փոխհարաբերություններն արտացոլող պատմությունները փոխանցվում են սերնդեսերունդ՝ նպաստելով ժողովրդի պատմական գիտակցության ձևավորմանն ու ինքնության հաստատմանը»։

Վերոհիշյալ բաժնում հեղինակը հավուր պատշաճի սեղմ ներկայացնում է հայ բանահավաքչական աշխատանքների պատմությունը՝ դրանց մեջ առանձնացնելով բուն Արցախի ժողբանահյուսությանը վերաբերող ուսումնասիրությունները։

Թե՛ ժողովրդական, թե՛ գեղարվեստական գրականության, ֆոլկլորային երկերի մեջ հաճախ մի ժանրի գործը ներկայացվել է մի այլ ժանրի տակ։ Ո՞րն է կարգը գեղարվեստական կամ ֆոլկլորային երկի ժանրի բացահայտման ուղղությամբ։

Հովհաննես Թումանյանի «Գեղարվեստական երկեր» ժողովածուի առաջաբանում Եղիշե Չարենցը դիրքորոշող կերպով կատարել է հայտարարություն։ «Անհրաժեշտ է մի քանի խոսք ասել մանավանդ այդ չարաբաստիկ «ժանրերի» մասին։ Թե որքան խախուս բան է «ժանր» հասկացությունը, զուրկ գիտական որևէ օբեկտիվ հատկանիշից, ապացու-

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 3։

ցում է թեկուզ հենց այն հանգամանքը, որ ինքը՝ Հովհ. Թումանյանը իր ժողովածուները կազմելիս շատ հաճախ միևնույն գրվածքը գետեղել է մերթ իբրև «լեզենդ», մերթ իբրեւ «հեքիաթ» (կավելացնեմ նաև՝ իբրև «ավանդություն», «բալադ»։ Ընդգծումը՝ Զ. Բալայան) և այլն, - և բոլոր դեպքերում էլ հավասար իրավունքով, որովհետև ամբողջ գրականության մեջ չենք գտնի երկու հոգի, որ միևնույն բնորոշումը տային պոեմին կամ բալադին, պատմվածքին կամ վեպին...»¹:

Բանահյուսական ժանրերի տարբերակնան մեկնությունները հայ բանագիտական միտքը այլևայլ ձևերով է ներկայացնում։ Հաճախ հիմք են ներկայացնում թեմատիկ հատկանիշները, ոմանք էլ՝ ձևական-կառուցվածքային կողմը։ Նշանավոր բանագետ Վ. Պրոար, քննելով հարցը, ներկայացնում է ժանրի տարբերակնան չորս չափանիշ՝ ա) նրա պոետիկան, բ) կենցաղային կիրառությունը, գ) կատարման ձևը, դ) դեպի երաժշտությունն ունեցած հակումը։ «Ոչ մի հատկանիշ առանձին վերցրած, իբրև կանոն, դեռ չի բնորոշում ժանրը։ Ժանրը որոշվում է այդ հատկանիշների ամբողջությամբ»², - եզրահանգում է գիտնականը։

Ա. Սարգսյանը «Արցախյան ավանդություններ» ժողովածուի ներածությունում նույնպես նշում է նման բանագիտական փոխանցումների մասին՝ հատկանշելով հայ բանագիտության պատմության փաստերը ևս։ «Տումի գյուղի Պըօըվալէնց տեղանքի մասին պատմվող ավանդությունը (թիվ 93) բանագիտական գրականության մեջ ներկայացվում է նաև որպես հեքիաթ³։ Գիշերվա և ցերեկվա հաջորդականությունն բնորոշող ավանդությունը (թիվ 8.բ) հանդես է գալիս «Սինան թագավէրը» հեքիաթի մեջ⁴ և նույնիսկ գործածվում որպես հանելով (Մին պառավ կընէգ՝ ըռըշկին մին սըէվ, մին սպիտակ կըծէգ, մինը կըզկում ա, մինը յըէտ տամ)։

....Քիչ չէ նաև ավանդությունների վերածված անեկուտների և գրույցների թիվը։ Որոշ ավանդություններ էլ ժամանակի ընթացքում դարձել են առած-ասացվածքներ, դարձվածներ, օրինանքներ, անեծքներ՝ իրենց մեջ խտացնելով հարազատ ժողովրդի իմաստությունն ու փիլիսոփայությունը⁵, - եզրահանգում է բանագետը։

¹ Զարենց Ե., Եժ, հ. 6, Ե., 1967, էջ 249:

² Պրոռ Բ., Принципы классификации фольклорных жанров, "Советская этнография", 1964, N 4, стр. 149.

³ Տե՛ս Դավիթ Ժայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, Ե., 1966, էջ 675:

⁴ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 29:

⁵ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 4:

Ա. Սարգսյանը խոսում է ավանդության ժամրին հատուկ ժամրի ստեղծման պատմության, կառուցվացքի ու ձևի, գեղավեստական, ապա նաև պատմական ու ճանաչողական արժեքի ու նրա հատկանիշների մասին, նաև արժեքորելով իր գնահատումները, ցույց տալով, որ ավանդությունները երբեմնակի ուսումնասիրողների համար դառնում են որպես անհերքելի սկզբնաղբյուրներ:

Սակայն, ինչպես գիտենք, հաճախ բանահյուսական ժամրերը, սերնեց սերունդ փոխանցվելով, շեղումներ են ունենում, կորցնում իրենց հավաստիությունը և արտահայտման ձևերը: Դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ Ա. Սարգսյանի հատկանշած Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի վերաբերյալ ավանդությունը.

ՍԸՆՏՈՒՐԱԾԵՆ

Հու Վեր Սուխտուրաշեն իլած ա, տըէսած կինի, թա իինչ տըրախստ տըրէ ա՝ գօրտ-գօրտ Ճիրէր, կանանց հանդէր, ծառէր, ծօրէր: Դէ, ըշխարքավը մին անումը յէր իլած տինջիրին էլ Ճօկ պէն ա: Շատէրը գյուդում ըն, թա ըտըրէ սըխտօղը շատ ա, ըտըրա հէտէ յա անումը ըտի, ամիա չ: Սըխտօղը ըստըրէ լավ չի տըրէնում: Ես շինատըրէղը քյոհնա վախտէրքը իլալ ա Իրանէն շահէն դըշատըրէղը: Վեր շահը գզզանան յէկալ ա, ըտըրէ վէր յէկալ, շինըտըրէղէն անումը տիրալ ըն Շախ դուրան շէն (շահէն վըննաը կընալի շէն): Դէ, պարպառ ա լի՞, ժուկ ա ընցալ, ժամանակ ա ընցալ, էս անումը փոխվալ ա, տըրէալ Շըխդուրաշեն, յէտնան էլ՝ Սըխտուրաշէն¹:

Ըստ Ա. Ղանալանյանի՝ ավանդությունները տեսակավորվում են երեք կարգով.

ա) ստուգաբանական ավանդություններ (մեկնվում, ստուգաբանվում, իմաստավորվում են անհասկանալի բառերը),

բ) բացատրական ավանդություններ,

գ) Վարքաբանական ավանդություններ:

Ա. Սարգսյանի դիտմամբ՝ արցախսահայ բանահյուսությունում գերակշռում են ստուգաբանական ավանդությունները:

Հետևելով բանագիտության մեջ տարածված ավանդությունների ազգային հատկանիշների (դրանք լինում են ազգային, միջազգային և եկամուտ) քննությանը՝ բանահավաքը կարծիք է հայտնում, որ արցախսահայ

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, թիվ 32, էջ 23:

բանարվեստում՝ ըստ քանակի և պատմական ու ձանաչողական արժեքի՝ գերակշռում են ազգայինները:

Իսկ դրանք Արցախի ու արցախցու ճակատագրի, պատմության, նրա խառնվածքի, էթնիկ պատկանելության, ոգեղենի գեղեցիկ, լակոնիկ, ստեղծագործական շերտերն են վերհանում:

Ժողովածուում ամփոփված (ինը բաժին) ավանդությունները հեղինակը, ինչպես նշել ենք, դասդասել է ըստ արցախցու ունեցած հավատալիքների, ծեսերի, սրբությունների, սրբատեղինների (իսկ դրանք կարող են լինել հայրենի բնաշխարհը՝ լեռները (Քիրս, Մռով, Դիզափայտ), գետերը (Տրտու-Թարթառ-Կարկառ), աղբյուրները, խորշերը, ջրերը, եկեղեցինները, բույսերը, կենդանինները, թռչունները, մայրը, հայրենիքը, կաթնասունները (կատուններ), երկնային լուսատունները և այլն և այլն), սիրած հերոսների (Վարքաբանական ավանդություն Թյուլի Արգումանի (թիվ 28), Հոք Երանելու (թիվ 29), Խրիմյան Հայրիկի (թիվ 30), Վանի Յուզբաշու (թիվ 31) և այլոց մասին), ծաղրի արժանացած մարդկանց, ատելության արժանացած թշնամինների (Լենկ Թեմուր, Բուլա, Փանահ և Իբրահիմ, Մեհսի խաններ) և այլ երևույթների շուրջ:

Հետևելով բանագիտական ժողովածուների կառուցքաբանական փորձին՝ Ա. Սարգսյանը «Արցախյան ավանդությունների» նյութը դասդասել է ըստ թեմայի, թեմատիկայի, պաշտանմունքային ծևի, վայրի, աշխարհագրական, պատմական տարածքի, իմաստի ու բովանդակության, կենդանական ու բուսական աշխարհների, երկնային մարմինների ու երևույթների, գյուղերի, մարդկային և տոհմային պատկանելության, կրոնական սյուժեների, մարդկային հարաբերությունների ցուցման:

Բանագետը խոսում է միաժամանակ միջազգային և եկամուտ արժեքների՝ երկերի մասին: Դրանք փոխառություններն են և ունեն թափառող բնույթ: Ըստ բանագիտական քննության՝ դրանք մտնում են փոխառությունների կամ թափառիկ սյուժեների դպրոցի կամ ուղղության ոլորտը:

Այս կարգի ավանդությունները հետևանք են հայ ժողովրդի՝ տարբեր ժամանակներում այլևայլ ժողովուրդների հետ ունեցած բազմադեմ բանահյուսական շփումների:

Ժողովածուի նյութը դասդասաված է, խմբագրված, ամբողջացված, քարտավորված՝ բոլոր կողմերով:

Ներածությանը կցված է ժանրին վերաբերող համարյա սպառիչ օգտագործված գրականության ցանկ:

Հարուստ ու տեսականորեն գնահատելի է ցուցված ծանոթագրություններ բաժինը: Նախ ներկայացված են յուրաքանչյուր ավանդության բանասացի ինքնությունը, ծննդավայրը, ապա տվյալ ավանդության համեմատությունը՝ հրատարակված գիտական աղբյունների հետ:

Միանգամայն ամփոփ, արժեքավոր աշխատանք:

Ժողովրդին է վերադարձվում ժողովրդի ստեղծածը, հնարավորինս՝ հավաքական տեսքով՝ իրենց հայթայթած արժեքներով:

Հայոց մեծերից քանի՝ քանիսներն են մղվել այդ սուրբ գործին՝ ժողովրդի ստեղծած բանավոր արժեքները հավաքելու, պահ տալու գրավոր հիշողությանը և այն վերադարձնելու ժողովրդին: Այդ նրանք են՝ նվիրյալները:

Այս սուրբ առաքելության մի վկան էլ, նվիրյալը՝ բանահավաք- գիտականն է, լեզվաբանը, բարբառագետը, մշակութային, կրթական գործիչը՝ Ա.Յ. Սարգսյանը:

Ավանդությունները առողջ և նորոգվող ժանր են, ժամանակի և մարդկային հարաբերությունների վկայակիմը, որն ազնիվ նպատակ ու խորհուրդ ունի՝ պահել ու պահպանել, մոռացության կորուստներից փրկել ազգի արարությունների, հավատալիքների, պատմության, բառ ու բանի, հարատևության խորիուրդը, լինել ազգի հոգևոր, մարմնավոր, ոգեղեն արժեքների անխաթար վկայագիրը՝ զոր ու զորընդեղ:

Ժողովածուն, նախկինի՝ «Արցախյան հանելուկներ»-ի ու նոր հրատարակվածի՝ «Արցախյան զվարձախոսություններ»-ի հետ միասին մի թանգագին ու արժեքավոր, բանագիտական բույլ է, չխամրող հիշողության դաշտ, որի մեկնությամբ կարող ենք ճանաչել ինքներս մեզ և մեր ցավանախշ պատմությունը, լինելության արմատը:

«Արցախյան հանելուկները» և «Արցախյան ավանդությունները», «Արցախյան առակները», «Ղարաբաղի բարեարի բառարան», «Արցախյան զվարձախոսությունները», որոնց դեռևս կանդրադառնանք՝ արցախահայ բանագիտական ուսումնասիրությունների շարքը համալրող լուրջ, արժեքավոր ժողովածուներ են:

Դրանց ընթերցողը ոչ միայն ուսանողը, մանկավարժը, բանագետը, բարբառագետը, բանահավաքը, գիտնականը կլինեն, այլև՝ ամբողջ ազգը:

Գիրքը խնբագրել է բ.գ.թ. Ավարդ Ղազիյանը, ով մեծ ավանդ ունի հայ և հատկապես՝ արցախահայ բանագիտության մեջ:

ժողովածուն՝ «Արցախյան ավանդությունները», տպագրության է երաշխավորել ԼՂՀ կողմության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

Այն արժանացել է ԼՂՀ կողմության և գիտության նախարարության մրցանակի՝ որպես տարվա լավագույն գիտական աշխատանք:

Անվիրվում

Արմեն Սարգսյանի «Արցախյան հանելուկներ», «Արցախյան ավանդություններ», «Արցախյան առակները», «Արցախյան զվարձախոսություններ», «Դարաբաղի բարբարի բառարան» և այլ բանահյուսական-հայագիտական ժողովածուներ հայ բանագիտական մտքի արժեքավոր նմուշներից են, որոնց մեջ արտահայտված են արցախահայության ինքնատիպ մտածելակերպը, մտախան-վածքի (մենքալիտետի) հզորագոր երակը, դարավոր արարումների ոսկե բիլագուկը, ներքին ու արտաքին բռնակալների, հարստահարիչների դեմ սուր, ընդգծված պայքարը, մշտարթուն, աննվաճ, ազատասեր ոգին, իմաստասեր և հավատավոր բարքը, որոնք ընդգծում են նրա անկրկնելի հանձարը:

Արցախցու ազգային և համազգային որակների, տոհմիկ, հրաշակերտ հոգեբանության շերտերի, ֆոլկլորային ակունքների վերհանման հիմանալի և դրվատելի գործին է լծված երիտասարդ տաղանդավոր բանագետը, որը երևան է հանված վերոդիտված գրքերում, հատկապես «Արցախյան ավանդություններ» գրքում:

Ценное фольклорное исследование

Балаян Зинаида

Резюме

Ключевые слова: Арцахский фольклор, своеобразный, народная психология, историческая память, новеллист, богатый традициями, говорящий, рассказчик, загадка, традиции, арцахские загадки, арцахские традиции, Карабах, диалект, словарь.

Коллекция книг Армена Саркисяна "Арцахские загадки", "Арцахские традиции", "Арцахские смешные истории", "Словарь арцахского диалекта" и другие фольклорные сборники являются одним из ценных доказательств армянской творческой мысли, в них отражен своеобразный ход мыслей армян Арцаха, мощная жилка менталитета, золотой венец векового творчества. Острая борьба против внешних и внутренних диктаторов и угнетателей, всегда бодрствующая и свободолюбивая душа, философский и религиозный образ жизни подчеркивают его непревзойденное мастерство.

Национальным и общенациональным качествам арцахца, его родовой психологии, и изучению фольклорных источников посвятил себя молодой талантливый фольклорист, что и проявляется в вышеупомянутых книгах, особенно в книге "Арцахские традиции".

A Valuable Creative research

Zinaida Balayan

Summary

Keywords: Artsakh folklore, folk psychology, historical memory, novelist, rich in tradition, the speaker, the narrator, a mystery, tradition, Artsakh puzzles, Artsakh tradition, Karabakh,dialect, dictionary.

The collection of Armen Sargsyan's books "Artsakh Puzzles", "Artsakh Tradition", "Artsakh Funny Stories", "Dictionary of the Artsakh Dialect" and other folklore collections are one of the valuable evidence of armenian creative thought, they reflect the original thinking of Artsakh, powerful vein mentality, gold crown of sentury creativity. The struggle against external and internal dictators and oppressors always cheeful and freedom-loving soul, philosophical and religious life emphasize its excellence.

National and nationwide qualities of Artsakh people, its generic psychology and the study of folklore sources devoted himself to a young talented folklorist, which is manifested in the above mentioned books, especially in the book "Artsakh tradition."